7 հուլիսի 2011 թվականի N 934 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի N 1325-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» N 1325-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Օրենքով սահմանած կարգով ՀԴՄ-ի պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող կազմակերպություններն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում գրանցման ենթակա ՀԴՄ-ն (ՀԴՄ-ները) և ՀԴՄ-ի անձնագիրը (անձնագրերը):».

2) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Հարկային տեսչությունը սույն կանոնների 4-րդ կետում նշված ՀԴՄ-ն և անձնագիրը (անձնագրերը) ստանալուց անմիջապես հետո լրացնում և ստորագրում է ՀԴՄ-ի գրանցման հայտ՝ համաձայն N 10 ձևի: Ստորագրված հայտի մեկ օրինակը տրամադրում է ՀԴՄ-ի պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող կազմակերպությանը: Հարկային տեսչությունը ՀԴՄ-ի գրանցման հայտն ստորագրելուց անմիջապես հետո կատարում է ՀԴՄ-ի գրանցում:».

3) ուժը կորցրած ճանաչել 6-րդ կետը, 19-րդ կետի «դ» ենթակետը.

4) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Օգտագործվող ՀԴՄ-ն նորով փոխարինելու դեպքում կազմակերպությունը, նախքան նոր ՀԴՄ-ի օգտագործումը, հարկային տեսչություն ներկայացնում է նոր ՀԴՄ-ն, դրա անձնագիրը, փոխարինվող (գրանցումից հանվող) ՀԴՄ-ն և դրա գրանցման քարտը:».

5) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Հարկային տեսչությունը սույն կանոնների 8-րդ կետում նշված ՀԴՄ-ները և փաստաթղթերն ստանալուց անմիջապես հետո լրացնում և ստորագրում է ՀԴՄ-ի գրանցման հայտ և ստորագրված հայտի մեկ օրինակը տրամադրում է ՀԴՄ-ի պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող կազմակերպությանը: Հարկային տեսչությունը ՀԴՄ-ի գրանցման հայտն ստորագրելուց անմիջապես հետո կատարում է ՀԴՄ-ի գրանցում և (կամ) գրանցումից հանում նախկինում գրանցված ՀԴՄ-ն՝ կազմակերպությանը տալով գրանցման նոր քարտ:».

6) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Կազմակերպության լուծարման, վերակազմավորման կամ բոլոր այն դեպքերում, երբ տվյալ կազմակերպությունում ՀԴՄ-ն հանվում է օգտագործումից, վերջինս հարկային տեսչություն է ներկայացնում գրանցումից հանելու ենթակա ՀԴՄ-ն: Հարկային տեսչությունը ՀԴՄ-ն գրանցումից հանելու հայտն ստորագրելուց անմիջապես հետո ՀԴՄ-ն հանում է գրանցումից և դրա մասին քարտում կատարում է համապատասխան գրառում, որը հաստատվում է հարկային տեսչության ղեկավարի ստորագրությամբ և կնիքով:».

7) 19-րդ կետի՝

ա. «բ» ենթակետը «և գումարն» բառերից հետո լրացնել «(ներառյալ կանխավճարը)» բառերով,

բ. «գ» ենթակետը «կանխիկ վճարում» բառերից հետո լրացնել «(ներառյալ կանխավճար)» բառերով.

8) N 1 ձևից հանել «(կամ տրանսպորտային միջոցի պետական գրանցման համարը)» բառերը.

9) N N 4, 8, 9 և 11 ձևերից հանել «կամ տրանսպորտային միջոցի պետական գրանցման համարը» բառերը.

10) N N 1, 4, 5 և 6 ձևերից հանել «Կ.Տ.» բառերը.

11) N 10 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ձև N10

Հ Ա Յ Տ

ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԳՐԱՆՑՄԱՆ

_____

(կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)

Գրանցման ենթակա հսկիչ-դրամարկղային մեքենաների քանակը՝ _____ հատ:

N N ը/կ	Հսկիչ-դրամարկղային մեքենայի			
	մոդելը	արտադրության տարեթիվը	ֆիսկալային հիշողության տվյալները	շահագործման վայրը

Հայտին կից ներկայացվող ՀԴՄ-ների անձնագրերի քանակը՝ _____ հատ:

Հայտի լրացման օրը, ամիսը, տարեթիվը _____ _____ 20 __ թ.

Հարկային տեսչության պետ	Կազմակերպության լիազոր անձ (անհատ ձեռնարկատեր)
_____	_____
(անունը, ազգանունը)	(անունը, ազգանունը)
_____	_____**»:**
(ստորագրությունը)	(ստորագրությունը)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ